

ԱՐՑԱՇՊՈՒԹԻՒՆ Ի ԳՐՈՅ

# ՅՈՒՂԱՐՉԱՆ

ԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՅ ԱՌԹԻՆ 100 ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԻՆԻ ՀԱՍՏԱՄԱՆ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԻԵՆՆԱ

(1811—1911)

ԵՒ 25 ԱՄԵԱՅ ՏԵՐԵՇԱԾՆԻ “ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ,, ՈԽՈՒՄՆԱԹԵՐԹԻ  
(1887—1911)

ՀՐԱՅՐԵԿԱՆ Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄՈԽԵԿՑՈՒԹԵՐՐ ՈՅԻՑԱԿԱԾՈՅ  
“ՀՈՒԴԵԱՅ, ԵՒ ՀՈՅԵՐԵՆԴԵՅ ԲՈԽԱՌՈՅ



ՎԻԵՆՆԱ 1911

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

---

SONDERABDRUCK AUS

# HUSCHARDZAN

FESTSCHRIFT AUS ANLASS DES 100 JÄHRIGEN BESTANDES DER  
□ □ MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN □ □

(1811—1911)

UND DES FÜNFUNDZWANZIGSTEN JAHRGANGES DER  
PHILOLOGISCHEN MONATSSCHRIFT „HANDES AMSORYA“

(1887—1911)

HERAUSGEgeben VON DER MECHITHARISTEN-KONGREGATION UNTER MITWIRKUNG  
□ DER MITARBEITER DER MONATSSCHRIFT UND ZAHLREICHER ARMENisten □



WIEB 1911  
MECHITHARISTEN-BUCHDRUCKEREI

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ “ՅՈՒԻՇԱՐՉԱՆ,,ԻՆ

Ազնարի մու Վիեննական Միհիթարյան Սիարաստութեան Խարիւրամնայ գործունէութեան վրայ:

1. Գալէ մք հայ ա մ ձ. Գ. բ.: Ազաթանգեղոսի կրկնագիր մասգիրը:
2. Եռուայր Ա. Թիւ գանդ աց ի՞ մնութիւն Մալխանեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի եւ Հ. Փարպեցոյ:
3. Weber Prof. Dr. S.: Ueber die Versuche, den Verfasser der Invektiven gegen die Armenier . . . zu bestimmten (— Միւր. Վէլուկը Թանըն Սահակայ Կաթողիկոսի ընդէւմ Հայոց երկու հակածողութեանց նեղինակն որոշելու փորձ մը):
4. Խաւաթ թաւաց Պունք. Գ. բ.: Յովակիմ Եռէօդէրի թղթերից:
5. Peeters P.: La passion arménienne de S. Serge le Stratélat (— Պէտք և բ. Ս. Սարգսի գօրավարի հայերէն վկայաբանութիւնը):
6. Conybeare F. C.: The age of the old armenian version of Irenaeus (— Կոնցի ի Պ. Ս. Խանենուի գրութեան Տարգմանութեան ժամանակը):
- 7.Մուրատ Փ. Ազուանն ասցուածք Նվիրենի վասն սիկոնիդեայ բաղարի:
8. Meillet Prof. Dr. A.: Remarques sur les լ de l'arménien classique (— Մէլլէ և Ա. Դիտողութիւններ հայերէն լ եւ դ գրերու վրայ):
9. Lüdtke Dr. W.: Zum armenischen und lateinischen Physiologus (— Լիւդտէ Վ. Հայերէն եւ լատին Բարուախոսի վրայ):
- 10.Մալյուս անհան Ա. Մի առնուած Նարեկի մէջ:
11. Seidel Dr. E.: Ein neues Exemplar des alten Aybark' und Algemeines zu seinem medizinischen Abschnitte (— Մայզ է է Ե. Հին Այբարքի նոր օքնակ մը եւ մասք թշկակն հատուածերու վրա ընդհանուր դասողութիւններ):
12. Տէր - Պունք ա մ ձ. Գ. բ.: Խարին Հայոց Տոգեպաշտութեան շրջանից:
13. Համբարձում Հ. Հ. Հայոց Արարացոց թշկանութեան տուա:
14. Tournebize Prof. Fr.: Schah Abbas I. et l'émigration forcée des Arméniens de l'Ararat (— Տուռնե - է բ ի կ Փ. Բահարան Ա. եւ Արարատն Հայոց բնի զաղականութիւնը):
15. Lebmann-Hartung Prof. Dr. C. F.: Die chaldaische Keilinschrift von Kaissaran (— Լիւմ ա - Հասկայ և Գ. Փ. Ենսարանի Խալդիական սեպազրութիւնը):
16. Տէռէկ ի է ի ա մ ձ. Գ. Արդի Խայերէն նացեալը, ներկան եւ ապագան:
17. Zanolli Prof. A.: Qualche osservazione sulla formazione del plurale nell' antico Armeno (Ֆանոլլի Ա. Քանի մը Ապագանութիւններ ին հայերէնի լոգնակի ճակին վրայ):
18. Գայրի ի է ի ա մ Ձ. Ա. Հայերէն թագն գեղագիտական տեսակէտու:
19. Pedersen Prof. Dr. H.: Armen. Կորին:
20. Ամոն համ Հ. Ալոյց բաներ:
21. Marquart Prof. Dr. Jos.: Armenianische Streifen. I. Historische Data zur Chronologie der Vokalgesetze. II. Zur Liste der Provinzen von Xorassan (Մարքարտ Ջ. Հայկական գծեր. Ա. Հայերէն ժամանակն օքնաց ժամանակագրութեան համար պատմական տուեալներ. Բ. Խորասանի զաւառնորու ժանկը):
22. Թուր գումեւ ա մ Դ. Վ. Մտեփանոս թօթչկ Ելչրիմաննեան:
23. Վայրի մ մ ա մ Հ. Ա. Ռունի, մասիկը զասական Հայերէնի մէջ:
24. Kraelitz-Greifenhurst Dr. Fr. v.: Ein Brief an den armenischen Hofkaplan Wardapet Nerses in Wien aus dem Jahre 1697 (Կրաէլիչ հ Գ. Վայրի ա մ Վ. Վ. Թուղթ մը ուղղուած առ Ներսէս Արդ. Դրան երեց ի Վիեննա, յամէ 1697):

ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԻ ԳԱՅԵՑՏԱԿԱՆ ԹԵԱՏՐԻ ՅԱՅՈՒՅ

ԳՐ. ՏԵՇԻՄՈՅԱՆՆԵՐՆ

Միսիթար Գօշի Դատաստանագրքի մի  
հատուածից տեղեկանում ենք նախնի Հայոց  
ժողովրդական երգման ձեւերի մասին։ Յայտնի  
է, որ զին հաւատալիքները պատճերաւոր  
կերպով արտայացաւած են երգման մէջ։  
Բայց Միսիթարի յիշած երգման ձեւերը այդ  
սովորական նշանակութիւնից բացի երկու<sup>1</sup>  
պատճառով եւս առանձին ուշադրութեան  
արժանի են. նախ՝ նրանք պահել են յիշու-  
ղութիւն մի այնպիսի աստուածութեան մա-  
սին, որը ցայցմ յայտնիչ ուրիշ ազդեցիւնից  
եւ երկրորդ՝ զին Հայոց հոգեպաշտութեան  
մասին նրանք մի նշանաւոր մանրամասնու-  
թիւն են պատճառմ։ Մեր յօդուածի ինոցիրը  
այս երկրորդ կէտը կը լինի։

Այս է Միսիթարի հատուածը.

Երկու օրինակ է երգման. մի խոստովանութեան երգումն է, եւ միւս՝ ուրացու-  
թեան։ Եւ ուրացութեան երգումն այն կոչի՝ որ զնէ զնեռու ի խաչ յաւե-  
տաբան կամ յեկեղեցի եւ հրաժարէ ուրացմամբ. կամ ուրացութեամբ ասել թէ՝  
քրիստոնեայ ոչ եմ թէ չեցէ այդպէս։ Եւ կամ որպէս այլազգիք ուրացութեան  
օրինակաւ տան երգումն — կամ յեկեղեցի մտանելով՝ զլցու շիջուցանել, եւ կամ  
բերանով ի ջուր եւ ի ձեթ փել, կամ խաչ ի գետնի նկարել եւ կոխել, կամ  
զան զնեաց ունել, կամ ոսկը ի ձեռն առնուլ, կամ ի գետնի երկուս ծիրա առ-  
նել եւ ի միոյ ի միւսն մտանել։ Զի այդ ամենայն եւ այդպիսիք ուրացութեան  
օրինակ է զոր չէ պարտ յանձն առնուլ քրիստոնեի թէեւ մահ հասանէ կամ տան  
քակումն<sup>1</sup>։

Նախ՝ մի քանի գիտողութիւնների արժանի է այդ հատուածի այն մասը, ուր  
յիշուած են ուրացութեան երգման եօթը ձեւերը. Թէէպէս նրանք ունին այս կարգը.

1. Դնէ զնեռու ի խաչ կամ յաւետաբան կամ յեկեղեցի եւ հրաժարէ ուրաց-  
մամբ կամ ուրացութեամբ թէ՝ քրիստոնեայ ոչ եմ եթէ չեցէ այդ այդպէս։

2. Յեկեղեցի մտանելով՝ զլցու շիջուցանել։

<sup>1</sup> Վաշարշապատ. 1880. էջ 51 նախագրութիւն։



3. Բերանով ի ջուր եւ ի ձեթ փշել:
4. Խաչ ի գետնի նկարել եւ կոխել:
5. Զշան զձետոյ ունել:
6. Ոսկը ի ձեռան առնուլ:
7. Ի գետնի երկուս ծիրս առնել եւ ի միոյն ի միւսն մտանել: —

Սակայն ուշադրութեամբ կարգալուց յետոյ նկատելի է, որ թիւ 2 եւ 3 երգման միեւնոյն ձեւի տարբեր վարիանանելն են. լոյս հանգնել եւ ձեթի փշել միեւնոյն նշանակութիւն ունի. իսկ ձեթ ի հետ յլշուող ջուրը (— որ հաւանօրէն պիտի լինի “Հուր”, արդարեւ՝ այրուած կրակի վրայ փշելը մեղք է համարուում շատ զաւառներում) երեւի հնաւանդ կանթեղի մասն է: Բացի այդ՝ ինչպէս յետոյ պիտի պարզենք, թիւ 5 եւ 6 երգման միեւնոյն ձեւի տարբեր վարիանաներն են. շնչ ձեռը եւ շան սոկը միատեսակ նշանակութիւն ունէր: Ուստի փոխանակ եօթն տեսակ երգման, իսկապէս յիշեալ հատուածի մէջ յիշուած է միայն հինգ տեսակ երգութիւն. այն է:

Ա. Դնէ զձեռս ի խաչ կամ յաւետարան կամ յեկեղեցի եւ հրաժարէ ուրացմամբ կամ ուրացութեամբ թէ՝ քրիստոնեայ ոչ եմ եթէ շիցէ այդ այդպէս:

Բ. Եեկեղեցի մտանելով՝ զլցոյ շիցուցանել կամ բերանով ի ջուր եւ ի ձեթ փշել:

- Դ. Խաչ ի գետնի նկարել եւ կոխել:
- Ե. Զշան զձետոյ ունել, կամ ոսկը ի ձեռան առնուլ:
- Յ. Ի գետնի երկուս ծիրս առնել եւ ի միոյն ի միւսն մտանել:

Բայց այդ մասնաւոր ուղղումից, նկատելի է նաև հետեւեալը. թիւ Ա. Բ. Եւ Գ. երգութիւնը ըստ բովանդակութեան հայդյանք են քրիստոնէական եկեղեցու հասցէին եւ ուստի ծագել են յետին շրջանում: Այդպիսի բնոյթ չունին վերջն երկու երգման տեսանինըրը — որոնց առարկան շունն է եւ գետնի ծիրը: Ուստի հասկանալիքէն Դ. եւ Ե. երգման մէջ է պահուած հեթանոս հայի հաւատակիքը:

Դատաստանազգի հրատարակիչը ուսումնասիրելով ընդարձակ յառաջարանութեան մէջ, ի միջի այլց, նաև յիշեալ հատուածը, եւ յիշելով որ Ա. Բ. Դ. Եւ Ե. երգման ձեւերը այսօր էլ ժողովրդի մէջ պահուած են, չի մեկնում թէ որպիշիք հեթանոսական հաւատակիքներ են արտայայտուած նրանց մէջ: Նաև Դ. Սամուելեան նոյն հատուածի մասին մատենախօսելու ժամանակ չի յարուցանում այդ հարցը<sup>1</sup>: Վերջիւն կովկասեան լեռնականների ազգագրական նիւթերն ուսումնասիրելու ժամանակ, առիթից օգտուելով մենք էլ այդ հատուածը եւ մասնաւորապէս Դ. երգումը համեմատութեան առարկայ դարձրինք մեր տետրակի մէջ<sup>2</sup>, բայց ին հաւատակիքների բնոյթը եւ առհասպակ երգման եւ հաւատակիքի ծագումը մնացին իրը աղաս ինտիւներ: Այժմ դառնալով նոյն հատուածին, կանգ կ'առնենք միայն Դ. երգման վրայ, որը՝ ինչպէս կը տեսնենք, բոլը արեւելեան ժողովուրդների, նաև ին հայերի հոգեպաշտութեան հետեւակին է:

<sup>1</sup> Հանդ. Ամս. 1908. Անդամ. 270—274.

<sup>2</sup> Լեռնականք Ա. Շառջ. 1910. էջ. 1—3:

## 1.

Թէսպէտ անցեալ դարի 80ական թուերին “Դասաստանագրքի,, հրատարակիչը գիտէր, որ “շան ձետ (պու) բռնելը նոյնպէս մնացել է շատ տեղերում,,,” այսուամենայնիւ մեզ զպատահեց այդ երգումը մեր զատաների ժողովրդական նկաթերի մէջ, իսկ նախնի մատնագրութեան եւ ոչ մէկ հասուածի հետ կարելի է նրան բաղդատել:

Կովկասեան լեռներում այդ երգումը կենցանի է մինչեւ այսօր եւ յայտնի են նրա զանազան վարիանները: Օս գնդապէտ կունդուխովի մի շրջաբերական թղթի մէջ, որ նա ուղիւ է իր ցեղին անցեալ դարի կէսերին, վաստ սովորութիւնները վերացնելու յորդորով, կարգում ենք:

Вы убѣдились въ неизѣпости и безсмыслии разныхъ народныхъ клятвъ, на могилахъ покойниковъ убивать собакъ и кошекъ, что введенъ во время глубокаго невѣжества и сохранилось по-нынѣ въ народѣ (Դուք հանգուել էք որ յիմար եւ անմիտ են այն զանազան ժողովրդական երգումները, ննջեցեալների գերեզմանների վրայ չներ եւ կատուներ սպանելը, որը ներմուծուած է խորին տպիտութեան ժամանակներն եւ պահուել է մինչեւ այսօր ամբոփի մէջ):<sup>1</sup>

Կատուների եւ չների սպանութիւնը կատարուում է այսպէս.

Приносять клятву на могилахъ умершихъ, или же, привязывая кошекъ и собакъ на высокіе шесты, убиваютъ ихъ изъ ружей въ присутствіи народа, произнося при томъ разныя неизѣпия причитыванія (Մեռածների գերեզմանների վրայ երգում են անում կամ կատուներ ու չներ կատելով բարձր ցիցերի ծայրին հրացանով սպանում են ժողովրդի առաջ, միաժամանակ զանազան յիմար աղօթքներ տանելով):<sup>2</sup>

Խնդու չները ուրիշ մանրամասնութիւն են կատարուում այդ երդման ժամանակ. Պոտոցկій պատմում է որ՝

“Սրբավայրում դարսելով շան դիակը եւ ոսկորներն, երդուում են. — թողի նմանիք քը մեռածներին իրենց ուսի վրայ շըշեցնեն այն ճանապարհով, որը մեր առաջ ձգուած է (դիակի եւ ոսկորների) անձեւով ջրուելուց եւ արեւով լուսաւորուելոց յետոյ — եթէ ես սուտ եմ ասումի:,<sup>3</sup>

Այս խօսքերը հասկանալու համար, որովհետեւ այլայլուած է կամ յապաւուած է նրա իմաստը, յիշուում ենք վերայի մէջ նաև աստուածութեան նուիրուած մի օրհներզը, ուր մեռելոց հոգիները քաջալերուում են զնարու դէսի անմահութիւն տանող այն ճանապարհով, որով զնացել են նախնիք.

“Մի վախիթ պահապաններից, ըրսաչքեայ “տփուր,, որոնք հսկուում են մեռեալներին: Նրանք նամացին են պատկանում, իջնուում են երկիր եւ պահպանուում են նամայի բնակութեան ուղին: ննջեցեալը լաւ կ'անի եթէ միշտ շաապէ նրանց ետեւից:” Ուստի եւ շանը վերաորող յանցագործի մարմինը կտոր-կտոր էին անուում հին հսկիկները:<sup>4</sup>

<sup>1</sup> Сборникъ съдѣдній о Кавказѣ, II. 305.

<sup>2</sup> Ib. 312.

<sup>3</sup> М. М. Ковалевскій Зак. и об. на Кав. I. 103—4. Спб. 1890.

<sup>4</sup> Беттани — Великія релігіі востока 1899. Спб. 31.

Յայտնի է այս հաւասարվելի որիշ վարդանաներ եւս.

Զենքաւեսոսայի համուճայն, չին պարսիկները մեռնող մարդու առջի առաջ բուռում էին մի կենդանի շոն, որը, իրրեւ կրօնական յարդանքի արժանացած մի արարած, մարդու մահից յետոյ նրա գիտակց միսր լսափում էր եւ թողնում միայն տվիրը. այդպիսով շոնը մեռնողի մին ուտելով, հօգին անցնում էր նրան<sup>1</sup>:

Սորարոն հազրոքում է, որ կասպեանք, չինաւուրց ծերերին զցում են անապատ եւ սպասում են, որ նրանց գիտակը լսին թռչունները եւ շները. իսկ Մողդիանացիք եւ Բակորիացիք իրենց ծերեւին եւ հիւանդներին ողջ ողջ ձգում են շների առաջ պատառուելու, շների՝ որոնք յատուկ այդ նպատակով նշանակուած էին եւ կոչուում էին տեղական մի բառով, որ թարգմանուում է գերեզմանափորներ<sup>2</sup>:

Հետեւողութեամբ այս բոլորի, Հայոց երգումը — զշան զեւոյ ունել կամ ապի ի ձեռան առնուլ — իրրեւ շան հաւասարվելի մի հիւանդութիւն (survival), նոյնպէս նշանակում է անդրշիրմեան կեսանքի սպառնալիքն ընտունել. երգուողը համաձայնուում է իր հօգին շանը յանձնել, մեռնել՝ շանը հազորդելով իր հօգին, — եթէ սոսում է:

### 3.

Անալզիաների հետեւողութեամբ ստացուած այս մեկնութիւնը դ. երդման համար ստուգուում եւ արգարանուում է թէ նախնեաց մատենազրութեան եւ թէ նոր ժողովածուների մէջ հանդիսաց ժողովրդական նիւթերով: Շունը, բայց երգման առարկայ լինելուց, չին Հայերի մաքում այլեւոյլ մօսապատկերներ ստեղծելու ստիթ էլ է տուել, եւ ապա թէ կրօնական երգման մէջ մուծուել:

Ի հարկէ հօգեց հաւատը — այս նախրի ծագումը եւ էութիւնը — մեր նպատակից գուրս է. բայց անիմզմի ամրողջ դրականութիւնից մի ենթադրութիւն պիտի յիշենք, որովհետեւ միեւնոյնը Եղնիկ հաստատօրէն ասել է.

Ամեն մի ծնուող մանուկ իր ամենահեռաոր նախորդների հօգին է բովանդակում իր մէջ: Նախ քան տօհմի նախանախորդը մարդիկ չը կային, միայն կենդանիներն ու բոյսերն էին, որոնց անունով էլ կոչուեցին նախանախորդները եւ նրանց սերունդը: Ուստի յետոնրդները կրում են իրենց մէջ կենդանիների հօգին: Կրօնական հասկացողութեան առաջն քայլերը այդպէս են սկսուած եւ այդպիսի ծագումն ունին տօսեմը, կորոնձը եւ Փետիզը. այդպէս առաջ եկան նաեւ տոհմական կոչումները — “Ապրենի կատու”, “Դորտո”, “Կապիկ”, “Չուկ”, “Օձ”, “Առիւծ” եւայլն<sup>3</sup>:

Զենքանապաշտութիւնը, հօգու թափառումը կենդանիների մէջ եւ մարդու մի քանի հօգի ունենալը — այդպիսի հաւատից է ծագում. շան պաշտամունքն էլ նոյնպէս: Ահա այդ տեսութեան հիմքը այն անալզիաներն են, որոնք առնուած են ֆիջի կղզու, Մալահազբիների, Օրբիսայի կոնդերի, Հրեաների, Փրոբիդայի Սեմինուերի կրօնական կեանքից<sup>4</sup>: Այսեղ բացակայում են նախնի Հայերի հաւատը, որ

<sup>1</sup> Тайлоръ — Первобытная культура. I. Animism. Спб. 1872.

<sup>2</sup> Лиднеръ Ю. — История семьи, 1897. Спб. 149—151.

<sup>3</sup> Татаревъ К. М. — Очерки по истории первобытной культуры 1897. М. 92—93 եւ շարուն.

<sup>4</sup> Тайлоръ — ibid.

ԺԵՇՄ է Եղիշիլը, ընդդեմ հեթանոսաց հասուածի մէջ։ Հստ այդմ հայերը զծովացուն ի կովէ եւեալ ասեն, զպայն իմն ի մարդկանէ, զառէզն ի շոնէ։ Հերքելով այդ հաւատը Եղիշիլ աւելացնում է։ Ու ի շանէ ինչ եւեալ՝ եթէ ընդ աներեւոյթ զրութիւնս ինչ կեցէ եւ յորժամ վիրաւոր ոք անկեալ ի պատերազմի գնիցին թէ լիքցէ եւ ողջացուցանիցէ, զօր արակէզն կոչեն։ Միթէ եւ զարակիզն եւս ոք կարիցէ ասել՝ թէ եւ զայն ուրուք տեսեալ իցէ։ Եւ թէ յառաջին ժամանակն արակէզք լիզէին զվիրաւորս եւ ողջացուցանիցն, արդ բնդէր ոչ լիզցեն եւ ողջացուցանիցն։ ոչ այն պատերազմոնք են, եւ նոյնպէս վիրաւորք անկանին։ Այլ յայն ժամ, ասեն, զիցազունք էին, եւայն<sup>1</sup>։

Այստեղ շեշտուած է շնից թէ որեւէ աստուածային հոգու բղինման եւ թէ մեռածների հոգեատացման անհնարաւորութիւնը. ուստի հակադիր մոտածմանի հասկացուում է որ գաւանուած են շները հնում իրբեւ հոգու աղբիւր։ Սակայն այդ չին հասատագիրի մի մասն է միայն եւ թերի հասկացողութիւնն է. լիւր այն է որ շները ընդունում էին առաջ մարդկանց հոգիները նրանց մահուան եւ ծերութեան ժամանակ եւ ասկ իրբեւ շատմարան նախնեաց հոգիների, այդպիսի շները լիզելով պատերազմում վիրաւորուածներին հաղորդում էին նրանց շոնչ եւ հոգի։

Այսպիսով աչա հասկացողութիւնը եւ մասպատիկը ամրողջանուում է յարակների վերաբերեալ թերի աւանդութեան մէջ, երբ անարօփիարէս ի նկատի ենք առնում այն զրականութիւնը, որի նիւթն է չին զիցարանութիւնների մէջ շների պաշտաման պատկերը<sup>2</sup>։

Սակայն յատուկ ցուցում էլ ունինք այն մասն թէ արդարեւ մեր հայրենիքի նախկին բնակիչներից մի տոհմ ունէր ծերունիներին ուտելու սովորութիւնը, իրբեւ կրօնական մի պահանջ. Հերովոս պատմում է Արաքսի Մասազետների մասն որ նրանք երկարագործութեամբ չեն պարապում, կերակրուում են միայն մասվ։ Իրենց տոնչմի ծերունիներին սպանուում էին եւ ինչոյք սարբում. մի քանի հատ անատուններ մորթելով, ծերունու միօր խառնում էին նրանց մասի հնու եւ ուտում էին ցեղական ինչոյքով։ Այդպիսի մահը ամենաերջանիկն էր համարուում. հիս անդութիւնից մեռածի մարմինը պիղչ էր եւ չեին ուտում ցեղակիցները, այլ թագում էին հոգի մէջ եւ լալիս էին նրա համար, որովհետեւ սուրբ վախճանի չը արժանացել, հոգին մարմինից բաժանուել է անցայտ կերպով։

Թէ հոգի, ոգի, շոնչ եւ թէ արին, միս եւ հոգի գաղափարները շատ ապգերի մէջ միւնցն բառով են կոչուած եւ նախնեաց հոգիների պաշտամանները հիմուած էր մասամբ ծերունիներին ուտելու սովորութեան վրայ. իսկ ժամանակի ընթացքում այլեւայլ կրօնական մասպատիկներ առաջացրն շները, որոնք յանձն առան չին շղջաններում առհմակիցների ունեցած մարդակերութեան գերը, այն փոփոխութեամբ, որ մարմինը արդէն պիղչ էր համարուում եւ գեւի բաժն. Կրամից բարպէս զի հոգին ազատուել էր հարկաւոր էր որ շոնը մարմինը լափեր եւ թողնէր ոսկորները. ուղեղ սահման նշանակել այդպիսի նոր հասկացողութեան համար եւ որոշել թէ որ ձեւը հոգեպաշտութեան հաւատալիքի կանխազցն է եւ որը յի անազցն էր նշանակել վիճելի մի շորք ինդիրների մասն միայն ենթագրութիւն-

<sup>1</sup> ԸՆԴՀԷՄ Աղանդոց հեթանոսաց. Վեւետ. 1826. 99—100.

<sup>2</sup> Յօ. Միլլերъ — Значение собаки въ мифологическихъ вѣрованіяхъ. М. Стр. 7—8.

ներով բաւականանալ։ Ծշմարիտը այն է, որ շան իրրեւ մեռածի հօգին դեւի ձեռքից փրկող կենդանու պաշտամոնքը ազդել է Կոմիսարի լեռնականների — Խեւսուր-ների, Պշաւների, Զեւնների եւ Ռնգու շների թաղման արարողութեան եւ գերեզմա-նատան ճարտարապետութեան վրայ մինչեւ այսօր իսկ<sup>1</sup>։

Մեր նախնեաց յիշտակարանների մէջ նցյնպէս կան այդ պաշտաման շատ հետքեր, որոնք իստա այլայլուած լինելով եկեղեցական հերինակներից, անձանաշելի եւ անձնկնելի են մնացել՝ որովհետեւ բանափրութիւնը անազդիայի մեթոդով չի առաջնորդուել։ Առ այժմ մենք կանգ կառնենք Շիդարի աւանդութեան վրայ.

“Թագաւոր մի կայր Հայոց Արտաւազ անուն եւ ուներ որդի մի խելագար Շի-դար անուն։ Եւ ի մեռանելն Արտաւազայ ոչ ետ զթագաւորութիւն Շիդարայ՝ զի խելագար էր. վասն որյ եւ աշխարհս վրդովեցաւ եւ աւերումն լիներ ոչ ասկաւ։ Եւ յաւուր միում հեծեալ Շիդար ի ձի, եւ ետ փոլ հարկանել թէ կամիմ թա-դարորել. եւ ել գնաց ընտիր հեծելոք ի զրոսան եւ ելեալ ի վերայ կարմընչի գետոյն վասն յանցանելոյ. եւ անդէն շարժեալ զնա այսոյն պղծոյ՝ անկաւ ի գետն եւ կորեաւ։ Եւ հեծելացօրքն համբաւեցին թէ աստուածքն Շիդարայ յափշտակեցին զնա եւ եղին ի սեւա լեռան, որ է Աւագ Մասիս եւ անգ կայ շղթայած. եւ երկու շուն մին սպիտակ միւսն սեւա կու լիզեն զշղթայսն Շիդարայ հանապազ եւ ի տա-րելցին ի մազն գայ, որ թէ կարի նա ելնէ եւ զաշխարհս անցուսցէ. վասն որյ կար-գեցին կախարդքն առասպել դիմք թէ ի տարէմուտն, ի նաւասարդի ա ամենայն գոր-ծաւոր զեւր գործն զինչ եւ իցէ կոփէ, երեք անզամ դարբինն եւ այն։ Զի կապն Շիդարայ որ ի մազն եկեալ է ի կորիլ՝ դարձեալ հաստանայ եւ ամբանայ, որ ոչ ելնէ Շիդարն եւ զաշխարհս անցնէ<sup>2</sup>։

Այս աւանդութեան մէջ էական դիպուածները պրանք են։

ա) Խելագար Շիդարը կենդանւոյն գեւերի ձեռքն ընկաւ եւ կորաւ. այդ ան-րնական մահի պատճառով նրա հոգին մնաց մարմնի մէջ եւ որրազան արարողու-թեան չարժանանալով, չերուը յաւիտնական տանջանքի մասնուեց։

բ) Պղծութիւնը եւ գեւը յաղթանակիւ են Շիդարին վեհութիւնի օրէնքը քանդելու համար. ջուրը, հողը, կրակը եւ մալդիկ դիակից միշա հեռու պէտք է պահուեն, մինչեւ նրա մարմնի միաը կը թափու էր։ Շիդար գետն ընկնելով՝ գեւի տիրապետութեան տակ էր գանուում. ուստի չերը անցածող աշխատում են իրենց տիրոջ համար, բայց շղթան չի կորուում երերեք։

Շղթան եւ երկաթը, որ բոլը հին ժողովուրդների կրօնական հասկացողու-թեան մէջ կախարդական բնոյթ ունի, պատկերաւոր արաւայատութիւն է երկու սկզբունքների խարցի կամ այն մաքառման, որ գեւն ու հրեշտակը — նիւթն ու հոգին — վարում են՝ անդնական կերպով կորած զիւցազի համար։

Նամայի շների չոփուու մակդիրը Շիդարի աւանդութեան մէջ յայտնուած է սեւ եւ սպիտակ բառերով, որոնք այլարանում են պրազմն ոյժի անդադրում աշ-խատանքը գիշեր եւ ցերեկ։

<sup>1</sup> Համայ. Vendidad, Fargad VIII—10, IV—16, V—45. Ըօօր. ընթ. օ կաք. գործաք III, ց. Գր- եանուական գործաքանակ 1877, էջ 276.

## 3.

Թուել այստեղ անիմպմի բոլոր արտայայտութիւններն առհասարակ եւ յիշել չեն հայերի հոգեպաշտութիւնն առանդող բոլոր յիշատակարանները երկար կը լիներ: Միիթարի Դ. երդման մի ուրիշ վարիանար այդ բոլորից պիտի զատենք եւ հին հաւատալիքի այսարուայ կնորանի պատկերը պարզենք նրանով:

Եկերեւում մի անդամ յիշել ենք, որ գիտի գիւտիան մասը, միսր, մաքրելու միջոցը սկզբում ուրիշ պատկեր ուներ՝ ցեղակիցներն էին ուտում՝ կանխաւ. սպանելով ծերերին, յետոյ երբ հոգեփոխութեան ժամանակ չները դարձան այդ կատարողները, հաւատալիքի առարկան էլ բարդուեց եւ թռչուններն էլ ստացան թէ հոգինների շահեմարանի եւ թէ հոգի վերադարձնող եւ կինդանութիւն տուող ցից պաշտամունքը: Յիշել ենք “Կասպեանց”, սովորութիւնը, որով ծերերին նրանք ձգում էին անապատ, կամ փոս, կամ անսառ կերակուր լինելու թռչուններին եւ շներին: Լավող թռչունները բազմատեսակ էին, օր. արծիւ, անգղ, ագռաւ, կաշաղակ եւ այլն, ինչպէս նաև շնառեսակները, օր. գայլ, բորենի, արջ եւ այլն: Այդ հաւատալիքից այսօր մնացել է մեր ժողովքի մէջ անհամակրութիւն սեւ ագռաւի դէմ, որ արտայայտուում է “զուխ ուտող”, չարագուշակ եւայն բառերով. նաեւ մարդագայլ, քաւթառքուսի եւ գերեզմանափոր անունը: Քուսի հաւանօրէն շան ձայն տալը նշանն է եւ բարդուած է քաւթառ բառով՝ գերեզմանները քանդող եւ դիակը լավիղ զարպար հասկացնելու համար: Ժողովքական ասցուածների իմաստը նյոնպէս հաւատալիքի հետքեր է պահել իր մէջ. օր.

Ակուի ահու մարթ իշեն չե կանայ չօշ ասի:

Ակռաւը տարածն է լալի, բլուլը թողածը:

Ակռաւի տեսած սիրմը չե կանանչի:

Ակռաւի ձէնը Աստուձ վուր իմացիլ էր, Վարթէուրին ձուն գու քէր:

Այս կենդանին նախապաշարմունքը ագռաւի մասին յիշեցինք, որպէս զի յետոյ շարունակութեան մէջ տեսնենք, որ չին հաւատալիքի մէկ կամ միւս մասը միայն կարող է մնալ կամ յիշուել, զոր օրինակ քրիստոնէութեան ազգմանը՝ եւ այդ չը պիտի խանգարէ ուրեմն ամբողջացնել հաւատալիքը ի մի հաւաքելով անազօիքաները: Տեսանք որ հոգետուր “արլէզ ի շանէ,, պաշտաման առարկան ունեցել է նաև հոգէառ եւ մնարդակիր չներ, գերեզմանափորներ կոչումն: նյոնպէս ահա զուխ ուտող ագռաւակերպ թռչունները կեանք տուող եւ կինդանութեան սպասաւոր են եղել:

Արծրունեաց տոհմական առանդութիւնը պատմում է աստուածային արծուի այնպիսի գելը Արծրունեաց տոհմի նախանախորդի համար, որպիսին ուրիշ ազգերի նախանախորդի համար եղել են գայլ, արջ, զորտ եւ այլն. ահա այդ առանդութիւնը. — Մանկան նիրհերց արձեւ եւ արեւ հակառակեալ եւ հովանի թռչույթատանւոյն թալիայելց:

Մ. Էմին այսպէս է հասկանում. երբ զբում ննջում էր ասորի գաղթականների տոհմից մի յոդնած պատանի, սկսեց անձրեւ գալ. եւ ահա օդի մէջ երեւաց արծուի թռչուքը. նա մանուկի վերեւը անշարժ կանգնեց եւ իր տարածած թեւերով նրան հովանի արեց: Յետոյ երբ անձրեւը դադարեց, արեւը սկսեց այրել եւ

<sup>1</sup> Խորեն, Բ. 7:

մանուկը քնեց. իսկ արծիւը թեւատարած մանուկին պաշտպանում էր արեւի տաքից<sup>1</sup>:

Խսկապէ՛ս այդ աւանդութեան միտքը բարդ չէ. մանուկին կեանք չեին տալիս երկնքի ոյժերը — անձրեւն ու արեւը, պատճեն նրանք, որոնք ամենից շատ հարկաւոր են ամեն կեանքի եւ ամենութեան համար. թռչունը կուռեց անարդար եւ անդրնական երկնքի գէմ եւ փրկեց մանուկի կեանքը:

Հաւանօրէն անձրեւի եւ արեւի հնագյոն հաւասալիքի մէջ եղել է թէ բարոյ եւ թէ չարի զաւանութիւն այնպէս, ինչպէս Շան եւ Ազաւի նկատմամբ տիսանք։ Այդ բնական երեւոյթների մէջ երկուութեան սկզբունքը նկատել կարող էր առաջն մարդը չնորչի երաշտի, արեւաշարութեան, հնկեղի եւ այլն. եւ անկախ զինդաւեսայից նաև՝ զաւանել օգտի եւ վնասի ազդիւները միեւնոյն իրերի մէջ։ Այս ննժագրութիւնը անում ենք նկատելով ոչ միայն հաղամակերտի թռչնի աւանդութիւնը, այլ նաև ննգուների մի երգումը, որի մէջ անձրեւը եւ արեւը հաղորդուած են իրեւեւ չարչարանքի ճանապարհ պատրաստողներ. բառացի կրկնութիւնը նոյն իսկ վիպաւմ է որ տարբեր ժողովուրդների եւ հեռաւոր գարերի մէջ հաւատալիքը նոյն է եղել։ Յանուն շան կատարուող երգման մէջ ննգուշ ցոյց տալիք մեռեց զերեզմանի վրայ զրած շան գիշան ու սակորները, ասում է իր հակառակորդին - թող իս նախնիք քո մեռածներին իրենց ուսի վրայ շնչեցնեն այն ճանապարհով, որը մեր առաջ ձգուած է՝ անձրեւով ջրուերոց եւ արեւով լուսառուեց յետոյ — եթէ ես սուտ եմ ասում (տես վերեւ):

Այսբանով զուգորդուում եւ լուսարանուում է, սակայն, երգման եւ հաւատալիքի իմաստը միայն, եւ ամփոփելով տեսնում ենք, որ թէ գոււի ուտող ագռաւաների եւ կենդանաբար արծիւի եւ թէ մարդակեր զերեզմանափառների եւ յուրութիւն տուող “իշանէ, առլուներ, ի հաւատալիքը մի ամրոջութիւն են կազմում, թէսկէտ հաղորդուած են նրանք ուրայն ուրայն եւ հակառակամիտ հատուածների մէջ. ըստ որում նայած աւանդութեան սիռէկին, ըստ այնմ էլ հաղորդուած է երկիմաստ հաւատալիքը րովանդակող կենդանու եւ թռչնի մէջ կամ միւս իմաստը։ Այդ պատճառով էլ միայն անալոցիաները կարողանում են ամրոջացնել նման պայմաններուում աւանդուող աւանդութիւնների թէրի եւ այդ պատճառով մեզ համար շատ անզամ անհականացի իմաստը։

Իսկ առհմերի ծագման խնդիրը մնում է քիչ լուսարանուած։ Առ այժմ, բոլոր վերոյիշեալի հետեւողութեամբ պէտք է մասածել որ Անգլ եւ Բագէ անուններով կոչուող նախարարական տոհմերը, ինչպէս նաև բոլոր կենդանական եւ բուսական եւ առհասարակ առարկայական անուններից սաեղծուած՝ զին ազնուականների մակղիրները ծագել են՝ նրանք վնաս վերաբերմամբ մեկնուած պայմանների, այն է հոգեփիսական պատճերառութիւնների սկզբնական շնչանում, օր. Հաւնունի, Գնունի, Վարաժնունի, Զիւնական, Թրթունի եւայլն, Գոնէ Անգլ անուան նկատմամբ մի ցուցում ու շագրութեան արժանի է։ Տօքը Անգլիք անունը, համաձայն բոլոր վերոյիշեալի, խսկապէս պէտք է կարդալ Անգլատերը, ինչպէս ննժագրել է սրամորէն մի բանասէր, անկախ մեր յարուցած խնդիրից (Մ. Արեղեան), իրը միակերպութիւն լուսատուր, Աստուածատուր, Այծատուր անունների։

<sup>1</sup> Աշուղ Հայոց Հոգուած. Մոսկով. 1850, 93.

## 4.

Բացարձակ մոքով որեւէ աւանդութին չկայ, որի մէջ շան եւ թռչնի հաւատալիքը լրիւ հաղորդուած լինէր: Սակայն Ծիբարի աւանդութեան վարիանսների մէջ կայ մէկը որը հաւատալիքի լրիւ պատկերին մօտ է եւ, ինչպէս կը տեսնի ընթերցողը, համարեա թէ լրիւ է՝ բայց լուսաւորուած ազօտապէս:

Ծիբարի, Արտաւազգի, Ամիրանի, Մշերի<sup>1</sup> եւ Պրոմեթէոսի աւանդութիւնների կապը շատ հեղինակներ քննելով ստոյդ են համարել: Մասնաւորապէս Մ. Էմինի երկու աշխատաթիւններն այդ խնդրի համար նշանաւոր են<sup>2</sup>: Բայց Էմինն էլ բաց է թողել Պրոմեթէոսի եւ Ծիբարի վէտիքի հանդիսման կիտերը, երեւի իր աշխատութեան մէջ ենթադրական չերեւալու համար:

Արդարին՝ ժայռի հեւեռուած եւ արծուի տանջանկին ենթարկուած հերոոր շատ կէտերով տարբերուում է Մասիսի խորքում շղթայուած եւ չների պաշտպանութեան ձգուած հերոսից. սակայն այժմ, երբ Ծիբար-Արտաւազգեան վէտի մէջ հոգեպաշտութեան հաւատալիքը պարզուած է, նոյնպէս պարզուում է նաեւ, որ Պրոմեթէոսի վէտի տարբերութիւնները ոչ թէ օսապ, այլ հարազատ են միեւնոն հոգեպաշտութեան հաւատալիքին: Խոկ էականը վէտիքի հէնց ներքին եւ գաղափարական հարազատութեան խնդրին է եւ ոչ թէ արատին պատկերաւոր նկարագրի տարբեր արտայայտութիւնը:

Այդ հայեցակէտով նայած, Պրոմեթէոսի վէտի վլխաւոր եւ նշանաւոր մի առանձնայատկութիւնն այն է, որ հոգեփոխութեան հաւատալիքի երկու անսպայման առարկաների շանը եւ թռչնի գերը պահէլ է նա. ասում ենք անսպայման ի նկատի ունենալով հին արեւելքի կրօնական կեանքը՝ ըստ վերցյալեալի:

Պրոմեթէոս երկու տարբեր տեղերում եւ տարբեր տեսակ պատժի է ենթարկուած. առաջ տարտարոսում խուարի թագաւորութեան մէջ եւ ապա ժայռի զլիսին եւ արծուի ձեռքոով: Ահա Հերմէսի խօսքերը.

\*Անինայ որտոտով եւ կայծակների սրերով՝ բարկացած ջեւոր կը հարուածէ այս ձորի ծերպերը, փոշու պէս մանրելով նրանց, իսկ քամբմնի կազմուածքը այստեղից նա կը խորտակի խուար անդունդի անհաս խորքերը: Եեայ, երբ կը լրանց անհամար տարիների շրջանը, դու արեւի լրս կը տեսնես, բայց (այն ժամանակ) կը սկսէ քեզ մօտ պահան հօրո, սեւաթեև ջեւսի արծիւը: Վայրինարար եւ անյառութեամբ կը սկսի պատասել նա քո տանջուած մարմնը, կացահարել քո սեւ թռքերի մնացորդը — այն անկոչ հիւրը, ամբողջ օրերով: Եւ այլ եւս մի սպասիր դու քեզ համար փրկութիւն այդ տանջանկից: Միթէ կը լինի մի աստուած, որ ուղենայ քեզ թափել իր անձով եւ կ'իջնի գժուիքի մասին խորչերը, զագաղի նման մույլ տարտարոսի սահմանները. մի մասածիր այդ: Խմ սպառնաղես մասցածին չեն, ոչ, եւ այլն:

Մեզ յայսնի չեն Հեսիոդոսի, Պինագարոսի, Լուկիանոսի եւ Աստրոն Հոռովասցու տեղեկութիւնները, որոնց մէջ աւանդութիւնը, ենթարիուելով զանազան փո-

<sup>1</sup> Գաւիթը եւ Մշեր վէտի եւ Ամիրանի աւանդութեան մասին մենք պատրաստ ունինք մի ընդարձակ համեմատական աշխատաթիւն: — «Եռանակները» Դ. այդ պատմառով սպառել յապաւում ենք այդ երկու վարիանտի յիշառակութիւնը:

<sup>2</sup> «Վէտիք Հայոց Հայաստանի», «Արգևէս խորենացին եւ հին հայեական վեպ»:

փոխութեան, տարբեր եւ այլեւայլ մանրամասնութեամբ է պատմուած — որպէս զի կարել լինէր ստուգել այն, ինչ որ Հաքիլէսի այս հասուածը արդէն հիմք է տալիս միայն ենթազրելու. այսինքն՝ որ արեւելեան աւանդութիւնը յշներին յայտնի է եղել հաւասարիքի անհրաժեշտ մասերով — տարտարոսեան տանջանքի եւ հոգէառ թռչնի մասնակցութեամբ, թէ պէտեւ յունական տարտարոսի պահապանը երեք-զիլեան շունը — ցերբեր — չէ յիշուած այս հասուածի մէջ։ Թէ ցերբերը, թէ եամայի չոփուո շները եւ թէ Շիքարի, Խնդաշների, Զենդաւեսայի եւ հին ժողովորդների հաւասարիքը միատեսակ իմաստ ունին. շները տարտարոսի մեռած հոգիներին մերթ հակում են, մերթ ընդունում, մերթ վերափենդանացնում։ Ուստի հին յշնը հանդիսանու լինելով չերմէսի եւ Պրոմէթէսոի տեսակցութեան եւ լինով բեմից չերմէսի հաղորդածը տարտարոսի մասին, անհրաժեշտորէն եւ ընականարար պատկերացնում էր շան — ցերբերի — գերը. այդ աւելի քան պարզ է եւ հասկանալի։ Մեզ թուում է նյոյ իսկ որ շան մասին Հաքիլէսի լուութիւնը գեղարուեստական պատճառ ունէր եւ աշա թէ ինչպէս։ Հաքիլէսի մահից մի տասնհինգ տարի յետոյ, 441 թուին Սոֆոկլէսի դրած «Անտրիփոնա», «Ըլքերգութեան մէջ այս աշխարհից շանը ցուցադրուած է ամենապիշտ պարածը եւ հին պրութեան ու հաւասարիքի յետին հետքն անդամ շունի նա յշնի աշքում։ Հզիսոսի որդին, որ գաւաճանել էր իր հայրինի քաղաքին, եւ մեռել իր հարազատ եղօր ձեռքով, առենածայրայել պատճի արժանի էր. բայց մեռածին ինչպէս պատճի էլ, եւ ահա ինչպէս։

Կրէն — «Ոչ ոք չը պէտք է լոյ կամ թաղէ նրան. այլ թող, առանց շերիմի, խայտառակ տեսքով՝ շների եւ թռչունների առաջն ձգուի. աշա իմ կարծիքս. երբեք չափերը ինձնից չեն ստանալ այն յարգանքը, որը բարիներին է վայելում։»

Ոլքերգութեան ինտրիգը հէնց մեռածի հոգուն կրնական պարտուատաշան յարգանքից զգիկէն է. եւ Անտրիփոնան զոհ է զնում իր տոհմական եւ արինաւեցական զգացման, գաղտնի թաղելով կը եղար մարմինը՝ ի հեճուկս նրէնին։ Շների եւ թռչունների այս այլակերպուած դերը եւ հին հաւասարիքի կերպարանափոխութիւնը ինքնեւսանիքեան շեշտուում է այդ հասուածով բայց միեւնոյն ժամանակ հասուածը ցոյց է տալիս, որ, ինչպէս կարծում ենք, խիստ անփեղարուեստական պիտի լինէր, եթէ տեսնէնք Պրոմէթէսոի մարմինը կենդանւոյն տարտարոսի շան առաջ ձգուած. ընդհակառակը շատ տպաւորիշ է տարտարոսի նկարագիրը չերմէսի բերմում, առանց շան նկարագրի. ուր խորհրդաւոր անպատճանութեան մէջ պիտի չիծէ տիտանը. այդ պատկերը սկսուում էր ներկայացման վերջում. որոտն ու կայծակը, երկինքն ու երիկիր քասան առաջանուած. ժայռելը խորտակուում են, հետը նաեւ տիտանը. սկսուում էր նրա պատճի առաջն մասը, տարտարոսի կեանքը։

Տարտարոսը եւ Աւագ Մասիսի անդունդը զուգորդուելուց յետոյ, զուգորդուած են նաեւ երկու հերոնների պատճի անվախան լինելու պատճանները. նիւթը անսպառ աճման մէջ է։ Որոշուած է որ Շիքարի շղթան լիզելով շները չը կարողանան սպառել, այլ ամէն տարիմանին մաշուածը վերասին նորոգուի, իսկ Պրոմէթէսոի թքերը միշտ աճեն, արծուի պոկած պատառի փոխարէն։

Նյոյ է նաեւ գաղափարը — նախնական կարգերի գէմ ըմբուտութիւնը — որը տանջանք է բերում. բոլոր հերոնների համար։ Խւպիտերը տիտաններին յաղթելուց յետոյ, մասածեց խսպառ. ջնջել մարդկային սեռը։ Որպէս զի բռնապետական այդ

կամայականութիւնից ազատէ իր սիրելի մարդկանց, Պրոմեթէոսը նրանց սովորեցրեց բարի սկզբունքները եւ անմահութիւնը: Խոպանէրը նրան պատժեց: Արտաւազք տեսաւ, որ հին կարգերը եւ իր հայրն անդամ նոյն իսկ իր մահուան գագաղից ժողվողին խաւար ու բարբարութիւն են միայն սովորեցնում: Պատմից-անձնասպանութիւնը, նիսթականն է շեշտել, իրեւ կեղեցական անձնաւորութիւն, բայց դարեր շարունակ այդպիսի անձնասպանութիւններ կատարուում էին եւ երգիբառ աւերակ չեր էլ գառնում: մանաւանդ որ Արտաշէսը, ըստ վէպի, ամենալի էր թողել իր երկիրը մահուան ժամանակ: ուստի Արտաւազքը բարբարութիւն է համարում «աւերումն»: նա աեսաւ որ իր հայրը թէպէտ մեռաւ, բայց գեր ժողովուրդը հայրական հին կարգերի ետեւից է գնուում: «մինչ գու գնացեր եւ զամենայն երկիրս լնեգ քեզ տարար», ուստի «ըմբոսացաւ, բայց նաեւ պատժուեց»: Այդ ուղութիւնը Արտաւազք ցոյց էր առուել նոյն իսկ իր հօր կենդանութեան օրով, իսկընզ Արտավից եւ հօր դայեակից նրանց կենդրոնախօս իրաւունքները, որեւէ նախարարի արքայապայել պալատական ապրուսոր եւ իր մօր ամուսնական կեանքի մէջ նկատած անհաւատարմութիւնը վըգովեցին նրան: Այս բոլորը իր հօր գէմ էր: Ուստի եւ զեր շատ առաջ նա հաշակուած էր իրեւ զիւահար: Ծիգարի վէպը նոյնակէս: Հայրը որդուն զըկել էր ժառանգութեան իրաւունքից եւս, թէպէտ վէպը այդ բացատրում է որդու խելագարութեամբ, բայց մենք աեսնում ենք, որ աշխարհի էւսը Ծիգարի կուսակիցն էր: երկու կողմերը մրցում են եւ ահա հայրական կարգերի եւ որդեկան ցանկութիւնների մաքաւանն ժամանակ «աւերումն լիներ ոչ սակառ»: Ի վերջը յաղթող է հանդիսանում օրդին եւ հրատարակում է, որ նիփը կամենում է թագաւոր լինել: Սակայն անյաջող, որովհետեւ ինչպէս Պրոմեթէոսին եւ Արտաւազքին, սրան էլ պատժում է հակառակորդների միեւնյան բարյական ոյժը — կրօնական բէժիմք: Ուստի երեք աւանդութիւնն էլ սկսուում են միեւնյան զրդապատճառով՝ ըմբոսութեամբ ամբողջ կարգերի գէմ, եւ պասկուում են մի տանջանքով, որ միակերպ բոլոր վէպերի մէջ անհիմզմի պատկերն ունի:

Ահա այս է րոլը, ինչ որ կարող ենք ասել Պրոմեթէոսի եւ Արտաւազքեան վէպի առընչութեան մասին՝ հօգեսպաշտութեան հաւատալիքի: Չը վերջացրած այս էջը մի դիտողութիւն սակայն հարկաւոր ենք համարում սրան կցել: Մինք աչքի առաջ ունինք, որ Պրոմեթէոսի վէպը գեղարուեստական պահանջներով շատ մասերից եւ բնական գեղեցիկութիւնից զգիուել է նօրինակի ողբերգութեան մէջ: որ վէպը, վկայութեամբ մի շաբաթ գասականների, գարերի ընթացքում ընդունել է նորանոր մասեր եւ կորցրել է նախնական պարզութիւնը եւ հաւատալիքի անտիւղծ պատկերը. վերջապէս՝ մենք նկատում ենք նաեւ, որ շատ աչք պատկեր ունին ևս քիլէսի ողբերգութեան մէջ հին հաւատալիքի հետքերը, սակայն չէնց այդ միեւնյան պատճառներով այդ ազօտ հետքերը թանգ պիտի գնահատուեն եւ ուշացրութեան արժանի համարուին մանաւանդ ներկայում, երբ հաւատալիքի պատկերի ազօտութեան աստիճանները չն ինքըին, այլ հինց ինքը այդ պատկերը իր ամենաթոյլ լուսաւորութեան մէջ անդամ, ինչպէս եւ է իսկ:



6866-9440.0 1971



822

25. Մաքսուն կամ Ա. Գ.: Զէյթունիք բարբառի ճամական դրութիւնը:
26. Բաղդան պահեալ Պրոֆ. Հ.: Հայերէն “իմանամ”:
27. Իւզգամնեալ Ա. Յ.: Հայերէն փոխանակ բառեր թուրքէնի մէջ:
28. Jensen Prof. Dr. P.: Hittitesch-armenisch (— Եանձն Թէ: Հիմիտերէն-հայերէն):
29. Ակիան կամ Ա. Ն.: Ցովաննէս Կաթողիկոս Օմանցւոյ նորագիւտ գրուածը մէ Բանին մարմարութեան պայ:
30. Strzygowski Prof. Dr. I.: Ein zweites Etschmiadsin-Evangeliar (— Ստրիցովսկի պահանջ մէջ):
31. Բասման չի կամ Ա. Յ.: Հայարք սարկաւագի “Կոնդակը”:
32. Bittner Prof. Dr. M.: Einige Kuriosa aus dem armenischen Dialekte der Walachei und der Moldau (— Ա. Բիներ կամ Ա. Մ.: Հայարքանց բարբառէն հնարքը պահանջ մասին):
33. Եհան է սէր նամ Բարգևան Ծպ.: Փոխութիւն մէ Եին Հայերէն թարգմանութեանց մասին:
34. Փէր հաթեամ Հ. Պ.: Մարկոս Աւետարանի Ժ. 9-20 համարները Հայոց բով:
35. Սրապեամ Հ. Ի.: Հայոց ի Խարանը բազար:
36. Liden Prof. Dr. E.: Ein Beitrag zur armenischen Lautgeschichte (— Լիդեն Յ. Հայերէն նշարամութեան նպաստ մէջ):
37. Ազոնց Ն. Տոքք ասուած ին Հայոց:
38. Դաւիթ թ-թէկ Մէկի ի Ս. Հայերէնի կեղծիք բարբառներու նիւտ անշութիւնը:
39. Karst Prof. Dr. I.: Zur ethnischen Stellung der Armenier (— Կարստ Յ. Հայոց ազգագրական դիրքը):
40. Մատիկան Հ. Ա. Մարտին թէ Արարատ:
-

